ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ (Արմ.) համայնքի 2013թ – ի համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվություն

1. Գործավարություն.

2013թ – ի ընթացքում համայնքի բնակիչներից ստացվել է 85 դիմումներ և առաջարկություններ, որոնք ստացել են իրենց համապատասխան լուծումները: Համայնքի բնակիչներին տրամադրվել են 585 հատ տեղեկանքներ, բնութագրեր: Հղվել են 115 հատ պաշտոնական գրություններ մարզային և ֆեդերալ ենթակայության կառույցների ղեկավարներին: Համյանքի ղեկավարի կողմից ընդունվել է 74 որոշում: Արձակվել է 16 կարգադրություն:

2. Ավագանու գործունեություն.

2013թ – ի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 6 հերթական և 5 արտահերթ նիստ: Արտահերթ նիստերը հրավիրվել են համայնքի համար խիստ հրատապ հարցերի քննարկման և լուծումներ տալու համար, մասնավորապես կատարվել է փոփոխություններ և լրացումներ համայնքի 2013 թվականի բյուջեում: Հաստատվել է համայնքի 2014 թվականի բյուջեն, հաստատվել է մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը: Սահմանվել է 2014 թվականի ընթացքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը: Ավագանու քննարկմանն են ներկայացվել է 36 դիմումներ և ստացել իրենց համապատասխան լուծումները:

3. Գյուղատնտեսության ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի առկա հողատարածքներն ու ցանքերն են.

բնակավայրային նշանակության հողեր – 140 հա.

գյուղ. նշանակության հողատարածք – 352 հա, որից

խաղողի այգի – 50.1 հա

պտղատու այգի – 66.0 հա

2013թ – ի կատարվել է 82 հա. հացահատիկի, լոբու, 5 հա., կարտոֆիլի 2հա., բոստանային կուլտուրաների 44հա., վարունգի 3 հա., լոլիկի 29 հա., սեղանի ճակնդեղ 3 հա., սոխի 34 հա., և այլ բանջարեղենի 27 հա., եգիպտացորենի 10 հա., արևածաղկի 10 հա., կերի ճակնդեղի 10 հա.ցանքեր:

2013 թվականի մայիսի 12- ի կարկտահարությունից հսկայական վնաս են կրել գյուղատնտեսական մշակաբույսերը: Հիմնականում վնասվել են պտղատու այգիները, խաղողի այգիները, բանջար-բոստանային կուլտուրաները, վնասի չափը կազմել է մոտ 100%: Վնասվել է մոտ 300 հա. գյուղ. նշանակության և տնամերձ հողեր, որոնք պատկանում են շուրջ 430 շահառուների:

Կարկտահարությունից տուժած շահառուներին ՀՀ կառավարության կողմից տրամադրվել են անվճար սերմեր, որոնք բաշխվել են շահառուներին, կարկտահարությունից տուժած սոցիալապես անապահով 344 շահառուները ստացել են 40. 000 -ական դրամ օգնություն: 58 ընտանիքներ ընդգրկվել են Հայկական կարմիր խաչ ընկերության կողմից սննդի և հիգիենիկ պարագաների անվճար տրամադրման ծրագրում, համայնքին տրամադրվել է նաև 3000լ. դիզ վառելիք, որը նույնպես բաշխվել է կարկտահարությունից տուժած շահառուներին:

Անասնագլխաքանակ.

խոշոր եղջերավոր անասուններ – 580 գլուխ, որից կովեր՝ 114 գլուխ

մանր եղջերավոր անասուններ – 2264 գլուխ ոչխար, որից մայրեր՝ 2084

255խոզեր, որից մայրեր՝ 64

մեղվաընտանիք – 615

թռչուններ – 4568

2013 թվականին կատարվել է 170 հա. ցրտահերթ, ցանվել է 78 հա. ցորեն:

4. Հողի հարկ և գույքահարկ.

2013թ – ին համայնքային բյուջեով նախատեսվել է 7500. 0 հազար դրամ հողի հարկ:

01.01.2014թ. դրությամբ համայնքի հողօգտագործողներից գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 8458.5 հազար դրամ հողի հարկ, որը կազմում է համայնքի տարեկան հողի հարկի 112.8% - ը:

Գույքահարկը բյուջեի եկամտային մասով նախատեսվել է 2035.6 հազար դրամ:

01.01.2014թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 2638.8 հազար դրամ,

որը կազմում է տարեկան գույքահարկի 130.0% - ը: 2013 թ- ի բյուջեով նախատեսվել է 2298. 2 հազար դրամ տեղական տուրքեր և վճարներ: 01.01.2014թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 858.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան 37.3% : 2013 թ- ի բյուջեով նախատեսվել է 120. 0 հազար դրամ հողի վարձավճար: 01.01.2014թ – ի դրությամբ գանձվել և մուտք է արվել համայնքի բյուջե 121.0 հազար դրամ, որը կազմում է տարեկան 100.8% : 2013 թ – ի բյուջեով պետության կողմից տարվա ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան կազմել է 19956.2 հազար դրամ, որը ֆինանսավորվել է 100% - ով: 2013թ – ի բյուջեով պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվելե է համայնքին տրամադրել 712.7 հազար դրամ սուբսիդիա: 01.01.2014թ – ի դրությամբ համայնքին տրամադրվել է 638.0 հազար դրամ, որը կազմում է 89.5%: 2013թ – ի բյուջեում սեփական եկամուտները նախատեսվել է 12003.8 հազար դրամ: 01.01.2014թ - ի. դրությամբ սեփական եկամուտների փաստացի մուտքերը կազմել են 12076.3 հազար դրամ: Սեփական եկամուտները կատարվել են 100.6 % - ով:

Ծախսեր.

Այգեշատի գյուղապետարանը 2013թ – ի հունվար ամսից առ 01.01.2014թ – ի դրությամբ կատարել է հետևյալ ծախսերը:

1. վճարվել է ընթացիկ աշխատավարձ – 17224.4 հազար դրամ
2. աշխատողներին տրվել է պարգևատրում ընդամենը – 1100.0 հազար դրամ
3. փոխանցվել է եկամտային հարկ – 4521.2 հազար դրամ
4. ներքին գործուղումների համար ծախսվել է - 200.0 հազար դրամ
5. կատարվել է թերթի բաժանորդագրության ծախս – 169.4 հազար դրամ
6. մասնագիտական ծառայության համար փոխանցվել է - 250.3 հազար դրամ
7. համակարգչային ծառայության համար փոխանցվել է – 78. 2 հազար դրամ
8. փոխանցվել է էլեկտրոէներգիայի գումար – 4229.2 հազար դրամ
7. փոխանցվել է գազի օգտագործման գումար – 260.0 հազար դրամ
8. աղբահանություն կազմակերպելու համար կատարվել է ծախս – 960.0 հազար դրամ
9. տրանսպորտային նյութերի վրա ծախսվել է - 500.0 հազար դրամ
10. միջոցառումների համար՝ մայիսի 28-ի, վերջին զանգի, բերքի տոնի և ամանորյա միջոցառումների համար նախատեսվել և կատարվել է ծախս – 600.0 հազար դրամ
11. մանկապարտեզին փոխանցվել է սուբսիդիա - 4747.0 հազար դրամ
12. նվիրատվություն է արվել շահույթ չհետապնդող կազմակերպություններին – 116.6 հազար դրամ
13. գրենական պիտույքներ ձեռք բերելու համար փոխանցվել է - 221.0 հազար դրամ
14. անապահով ընտանիքներին ցուցաբերվել է դրամական օգնություն – 900.0 հազար դրամ
15. վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար կատարվել է ծախս – 730.0 հազար դրամ
16. վարչական շենքի վերանորոգման համար կատարվել է ծախս - 990.0 հազար դրամ
17. Ծաղիկ-ծաղկեպսակ ձեռք բերելու համար փոխանցվել է - 200.0 հազար դրամ
18. Գեոդեզիական-քարտեզագրական աշխատանքների համար փոխանցվել է - 270.0 հազար դրամ

19. Սեքենաների և սարքավորումների ընթացիկ վերանորոգման համար փոխանցվել է - 80.0 հազար դրամ

Ազգաբնակչություն.

ա) Համայնքի փաստացի բնակչությունը կազմում է 2089 մարդ:

2013թ – ի ընթացքում Այգեշատ համայնքում ծնվել է 25 երեխա, գրանցվել է 16 մահ:

Ընտանեկան նպաստ ստացողներ 19 ընտանիք:

Համայնքում թոշակառուները 231 մարդ է:

5. Կրթություն և գիտություն.

Համայնքում գործում է մեկ դպրոց 201 աշակերտով: Մեկ մանկապարտեզ՝ հաճախող 45 երեխայով և 8 աշխատողով:

6. Մշակույթ.

Համայնքը ունի մեկ մշակույթի տուն 3 աշխատողով, գործող գրադարան 1 աշխատողով: Մշակույթի տանը գործում է ազգագրական պարերի խումբ՝ 42 երեխաներով:

7.Առողջապահություն.

Համայնքում գործում է բժշկական ամբուլատորիա 6 աշխատողով:

8. Զինակոչ.

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի գործուն աջակցությամբ պատշաճ կերպով կազմակերպվել է 2013թ-ի գարնանային և աշնանային զինակոչը: Կատարվել է պլան առաջադրանքը:

9 . Միջոցառումներ և սոցիալական ոլորտ.

Պատշաճ կերպով նշվում են ՀՀ պետական տոները և հիշատակի օրերը: Պարբերաբար իրականացվում է գյուղի փողոցների աղբահանությունը: Անխափան իրականացվում է խմելու ջրի մատակարարումը:

10. Համայնքի հիմնախնդիրներ.

ա) Համայնքի հիմնախնդիրներից է համարվում համայնքային նշանակության ճանապարհների և դաշտամիջյան ճանապարհների նորոգումը (հարթեցում, ավազապատում), որը կկազմի

մոտ 20.000.000 ՀՀ դրամ

բ) Վերանորոգման կարիք ունի նաև համայնքային կենտրոնի շենքը, որի ծախսը կկազմի մոտ 25.000.000 ՀՀ դրամ

գ) համայնքի հիմնախնդիրներից է նաև փողոցների լուսավորության հարցը, որի ծախսը կկազմի մոտ 20.000.000 ՀՀ դրամ

դ) համայնքի հիմնախնդիրներից է նաև համայնքի նոր թաղամասերի գազաֆիկացման և էլեկտրոֆիկացման հարցը, որի համար կծախսվի մոտ 10.000.000 ՀՀ դրամ:

Այգեշատի գյուղապետ՝ Ա. Սխիթարյան